ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 23-ից 25-ը Ինդոնեզիայի Հանրապետություն (Ջակարտա) գործուղման

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Վարդան Գևորգյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Ինդոնեզիայի Հանրապետություն (Ջակարտա) /հոկտեմբերի 23-ից 25-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության միջազգային քարտուղարություն

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   Մասնակցություն Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակներում «Իրական սեփականատերերի բացահայտում. փորձի փոխանակում, համակարգի ստեղծում» խորագրով համաժողովին

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**
   Հանքարդյունաբերության բնագավառում սեփական շահերի բացահայտման համաձայնեցում ազգային առաջնահերթություններին, սեփականության թափանցիկության համար իրավական-նորմատիվային բազայի ստեղծում, քաղաքականապես կապված անձանց ակտիվների հայտարարագրման սահմանում, հավաստի հաշվետվությունների չհրապարակման համար պատժամիջոցների սահմանում, հանրային շահառուների սեփականության գրանցամատյանների ստեղծում:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**
   Համաժողովի շրջանակներում ներկայացրեցի ելույթ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը Հայաստանի անդամակցության նպատակով կատարված քայլերի և առաջընթացի մասին: Տեղի ունեցան շահագրգիռ քննարկումներ այլ երկրների փորձի և իրականացվող գործընթացների վերաբերյալ:

8. **<u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>**
   Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**
   Շարունակել աշխատանքները Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակներում:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

27.10.2017թ